ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8/1
1702, Алаверди, З. Андраника 8/1
1702, Alaverdi, Z. Andraniki 8/1
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: alaverdi.lori@mta.gov.am
URL: www.alaverdi.am

№ 735

«23» 07 2014թ.

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ
Ն ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՈՐՊԵՍ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑ
ԳՐԱՆՑՎԱԾ և ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԿՆՔԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Ալավերդու քաղաքապետարանի 2014թ. կարիքների համար առաջացել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գրասենյակային կահույքի ձեռքբերման անհրաժեշտություն:

Ապրանքի մատակարարման պայմանները սահմանված են կից ներկայացվող պայմանագրի նախագծով:

Ալավերդու քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԼՄԱՔ-ՇՀԱՊՁԲ-11/13-65»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1, Ալավերդու քաղաքապետարան, Ա. Հովհաննիսյանին (311 սենյակ) մինչև 2014թ. օգոստոսի 1-ը, ժամը 10:30-ը:

Հայտերը կբացվեն Ալավերդու քաղաքապետարանի շենքում, ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1, 311 սենյակ հասցեում, 2014թ. օգոստոսի 1-ին, ժամը 10:30–ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը (օրինակելի ձևերը կցվում են):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտերի ներկայացումը պարտադիր չէ:

Հարգանքով՝

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ՎԱՐՈՍՅԱՆ